Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի <<Երասխի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզիկա (13 դասաժամ), ինֆորմատիկա (8 դասաժամ), մաթեմատիկա (18 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (15 դասաժամ), աշխարհագրություն (8 դասաժամ), արվեստ (1 դասաժամ), ֆիզկուլտուրա (4 դասաժամ), կերպարվեստ (3 դասաժամ), երաժշտություն (3 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ, աղջիկների և տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

.Անձը հաստատող փաստաթուղթ,

.<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

.Ինքնակենսագրություն (Ձև 5),

.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկը,

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)

.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի մայիսի 8-ից մինչև 2025 թվականի մայիսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 14:00-ին** ՀՀ Արարատի մարզի Երասխի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ **(094) 70-85-34** հեռախոսահամարով: